ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА
CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76

ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76

76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 1236
«25» 11 2024

Հեռ. (+374 10) 20-94-02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Նարեկ Մանուկյանի

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով ախտահանիչ նյութերի ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ. Դիմում-հայտարարությունը չի համապատասխանել հրավերի 2-րդ Մասի 2.1 կետին, ինչպես նաև հայտում բացակայել է իրական շահառուների մասին հայտարարագիրը, գնման առարկայի ամբողջական նկարագիրը, ապրանքային նշանը և ֆիրմային անվանումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 13.11.2024 թվականին ծանուցվել էր Մասնակցին հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով շտկվել են մասամբ: 10-րդ չափաբաժնի մասով շտկում չի կատարվել, 23-րդ չափաբաժնի մասով կատարված շտկումները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 42-րդ կետը Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը 10-րդ, 23-րդ չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 18.11.2024 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից - հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ	02910767	Ք. Երևան Նալբանդյան Փ շ25/14 76	Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն			25.11.2024թ. ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՏՆՕՐԵՆ՝ ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ. /010/ 20 50 50 /102/